

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Հայաստանի
Հանրապետության
դրամավարկային
քաղաքականության
ծրագիր

2010 թ. I եռամսյակ

Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

2009 թվականի չորրորդ եռամսյակի փաստացի ցուցանիշները և զարգացումները	3
Հաջորդող 12-ամսյա ժամանակահատվածի կանխատեսումները	9
<i>Արտաքին միջավայր</i>	9
<i>Համախառն առաջարկ</i>	9
<i>Աշխատանքի շուկա</i>	11
<i>Համախառն պահանջարկ</i>	12
<i>Փող և վարկ</i>	14
Գնաճի կանխատեսումները և դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում	15

2009 թվականին Կառավարության կողմից տնտեսական ակտիվության աճին ուղղված խիստ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության իրականացման պայմաններում ԿԲ դրամավարկային քաղաքականությունը նպատակաուղղված էր տնտեսական ակտիվության խթանման և գների կայունության ապահովման խնդիրների արդյունավետ համադրմանը, որի արդյունքում արդեն չորրորդ եռամսյակում արձանագրվել է տնտեսական անկման տեմպերի դանդաղում: Միջազգային շուկաներում հանքահումքային ու պարենային ապրանքների գների շարունակական աճի պարագայում ներքին ապրանքային շուկաներում թեև դիտվել է գնաճային ճնշումների ուժգնացում, այնուամենայնիվ, մինչև դեկտեմբեր գնաճը մշտապես գտնվել է նպատակային միջակայքի սահմաններում: Գնաճի տեմպի արագացումն առավելապես դրսևորվել է դեկտեմբերին, սակայն, ի տարբերություն նախորդ եռամսյակի, երբ գնաճը պայմանավորվել էր ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գների աճով, տարեվերջին գնաճի վրա գերակայող ազդեցություն է ունեցել գյուղատնտեսական ապրանքների գների սեզոնային աճը: Այսպես, 2009 թվականի չորրորդ եռամսյակում արձանագրվել է 3.7% գնաճ, որը մեծ մասամբ պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.8% աճով (նպաստումը գնաճին՝ 3.1 տոկոսային կետ), ինչն էլ իր հերթին հիմնականում հետևանք է «Միրգ» և «Բանջարեղեն ու կարտոֆիլ» ապրանքախմբերի գների համապատասխանաբար 35.9% (նպաստումը գնաճին 0.9 տոկոսային կետ) և 44.2% (նպաստումը գնաճին 2.1 տոկոսային կետ) սեզոնային աճի: Ընդ որում, հատկանշական է, որ եռամսյակի ընթացքում բանջարեղեն և կարտոֆիլ ապրանքախմբի գների աճը գերազանցապես պայմանավորվել է 4 ապրանքատեսակների՝ լուլիկի, վարունգի, կանաչ պղպեղի և սմբուկի գների աճով (նպաստումը գնաճին՝ 4.2 տոկոսային կետ): Միաժամանակ, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների աճը համապատասխանաբար կազմել է 3.0 և 0.7%, որոնց ընդհանուր նպաստումը եռամսյակի գնաճին կազմել է ընդամենը 0.7 տոկոսային կետ: Արդյունքում, 2009 թ. չորրորդ եռամսյակի 12-ամսյա գնաճի ցուցանիշը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 2.8 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 6.5% (չեղումը նպատակային միջակայքի վերին սահմանից՝ 1 տոկոսային կետ):

Եռամսյակի ընթացքում գնաճային ճնշումների ազդեցությունն արտահայտվել է նաև բնականոն գնաճի վարքագծում. այն 2009 թ. չորրորդ եռամսյակում կազմել է 1.7%¹, ինչի հետևանքով 12-ամսյա բնականոն գնաճը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ ավելացել է 1.5 տոկոսային կետով՝ կազմելով շուրջ 5.2%:

Արտաքին միջավայր

2009 թ. չորրորդ եռամսյակում համաշխարհային ապրանքային շուկաներում շարունակվել է գների աճը, որոնցից մեծ մասն արդեն գրանցել է տ/տ զգալի աճ: Գների աճի հիմնական պատճառը համաշխարհային տնտեսության վերականգնման նշաններն են: Այսպես՝ գրեթե բոլոր խոշոր երկրները երրորդ եռամսյակում արձանագրել էին եռ/եռ տնտեսական աճ, որը գերազանցեց սպասումները: Բացի այդ, ԱՄՆ դոլարի դիրքերի թուլացումը չորրորդ եռամսյակում նույնպես նպաստեց հումքային ապրանքների դոլարային արտահայտությամբ գների աճին:

2009 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում զարգացած արդյունաբերական երկրները շարունակեցին իրականացնել ընդլայնող հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություններ՝ ելնելով ֆինանսական կայունության վերականգնման և համախառն պահանջարկի խթանման նպատակներից:

¹ ՀՀ ԿԲ կողմից մշակված բնականոն գնաճի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանքեր» պարբերականում (2008 թ. 1-ին եռամսյակ). նույն պարբերականում պարբերաբար հրատարակվում են բնականոն գնաճի ցուցանիշները:

2009 թ. չորրորդ եռամսյակում գրանցվեց նավթի միջազգային գների եռ/եռ 9.5 տոկոս աճ՝ միջինում Brent տեսակի հում նավթի բարելի համար կազմելով գրեթե 75 ԱՄՆ դոլար (տ/տ աճը կազմել է 34.0 տոկոս):

Նախորդ եռամսյակի համեմատ գրանցվել է նաև արդյունաբերական և թանկարժեք մետաղների գների աճ: Պղնձի գինը Լոնդոնի մետաղների բորսայում չորրորդ եռամսյակում աճել է 13.5 տոկոսով՝ միջինում կազմելով 6665.6 ԱՄՆ դոլար տոննայի դիմաց, իսկ տ/տ աճը՝ 70.5%: Ոսկու գինը չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 14.8 տոկոսով՝ միջինում կազմելով 1102.3 ԱՄՆ դոլար, իսկ տ/տ աճը կազմել է 38.7 տոկոս:

Հացահատիկային ապրանքների գները հիմնականում պահպանվել են կայուն մակարդակում: Չիկագոյի ապրանքահումքային բորսայում հացահատիկի գները, եռ/եռ նվազելով 1.6 տոկոսով՝ չորրորդ եռամսյակում միջինում կազմել են բուշելի դիմաց 5.58 ԱՄՆ դոլար (տ/տ նվազումը կազմել է 10.0 տոկոս): Բրնձի գինը մեկ ամերիկյան ցենտների (45.3 կգ) համար կազմել է 14.8 ԱՄՆ դոլար՝ եռ/եռ աճելով 9.6 տոկոսով և տ/տ նվազելով 2.1 տոկոսով:

Ինչ վերաբերում է մյուս պարենային ապրանքներին, մասնավորապես՝ շաքարավազին և կարագին, ապա այդ շուկաներում շարունակվում է գների կտրուկ աճը: Շաքարավազի գինը էապես աճել է (եռ/եռ 9.9 տոկոս)՝ միջինում կազմելով 23.4 ԱՄՆ ցենտ/ֆունտի դիմաց (տ/տ 84.2 տոկոս աճ): Նորգելանդական կարագի գինը տոննայի դիմաց եռ/եռ աճել է 50.7%-ով՝ կազմելով 4733 ԱՄՆ դոլար (տ/տ փոքր ինչ՝ 1.5 տոկոսով նվազել է):

Ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի փոխարժեքը չորրորդ եռամսյակում եվրոյի նկատմամբ արժեզրկվել է մոտ 3.9 տոկոսով՝ միջինում կազմելով 1.49 ԱՄՆ դոլար մեկ եվրոյի դիմաց:

Դաշնային պահուստային համակարգը դեռևս շարունակում է իրականացնել «ծավալային ընդլայնման» քաղաքականություն՝ միևնույն ժամանակ պահպանելով նպատակային տոկոսադրույքը 0 - 0.25 տոկոս միջակայքում: Եվրոպական կենտրոնական բանկը եռամսյակի ընթացքում նույնպես պահպանել է իրացվելիության և տնտեսական աճին նպաստող ընդլայնող դրամավարկային քաղաքականությունը՝ չփոփոխելով տոկոսադրույքների 1.00 տոկոս մակարդակը: Նշենք նաև, որ չորրորդ եռամսյակում եռամսյա վարկի LIBOR միջբանկային տոկոսադրույքը շարունակել է նվազել՝ կազմելով 0.27 տոկոս:

Սակայն արդեն և՛ ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգը, և՛ Եվրոպական կենտրոնական բանկը նախանշել են տնտեսության և ավելցուկային իրացվելիության աջակցման ծրագրերի կրճատման չափերի և ժամկետների մասին, որոնք, ակնկալվում է, կավարտվեն 2010 թ. առաջին կիսամյակում: Միաժամանակ նշենք, որ որոշ երկրներ (մասնավորապես՝ Իսրայելը, Ավստրալիան) արդեն իսկ չորրորդ եռամսյակում միջազգային և ներքին տնտեսության առկա զարգացումների պարագայում կոշտացրեցին դրամավարկային քաղաքականության պայմանները:

Այսպիսով, չորրորդ եռամսյակի ընթացքում համաշխարհային տնտեսության վերականգնման միտումների ներքո արտաքին հատվածից փոխանցվող գնաճային ճնշումներն ուժգնանում են՝ պայմանավորվելով հանքահումքային և հիմնական պարենային ապրանքների միջազգային գների՝ սպասվածից ավելի արագ աճով:

Համախառն առաջարկ²

Սակրոտնտեսական իրավիճակի աստիճանական բարելավման արդյունքում, ինչպես և սպասվում էր, տնտեսական անկումը շարունակել է դրսևորել նվազման միտումներ, որի արդյունքում հունվար-դեկտեմբերին արձանագրվել է 14.4% անկում՝

² Տնտեսության ծյուղերի ցուցանիշները ներկայացնում են հունվար-դեկտեմբեր, իսկ ենթաճյուղերինը՝ հունվար-նոյեմբեր ժամանակահատվածը:

հունվար-սեպտեմբերի՝ 18.3% անկման փոխարեն: Ընդ որում, բացառությամբ ծառայությունների ճյուղի, անկում արձանագրվել է տնտեսության բոլոր ճյուղերում, առավելապես՝ շինարարության ոլորտում: Միևնույն ժամանակ, տարեվերջին այդ ճյուղերում նկատվել է անկման տեմպերի նվազում:

Արդյունաբերության ճյուղում արձանագրվել է ավելացված արժեքի շուրջ 7.6% նվազում՝ հիմնականում պայմանավորված *սննդամթերքի (7.8%), քիմիական արդյունաբերության (42.7%), ոսկերչական արտադրատեսակների (48%) և շինանյութերի (25.6%) արտադրության ծավալների* նվազմամբ, որը ինչպես շինարարության անկման, այնպես էլ արտաքին պահանջարկի կրճատման հետևանք է: Միևնույն ժամանակ, *մետաղի հանքաքարերի արդյունահանման և մետաղագործական արդյունաբերության ենթաճյուղերում*, միջազգային շուկաներում գունավոր մետաղների գների աճի արդյունքում համապատասխանաբար արձանագրվել է 8.4%-ով և 17.2%-ով աճ:

Նման զարգացումների պայմաններում նվազել է էլեկտրաէներգիայի և գազի պահանջարկը և, արդյունքում, էներգետիկայի ենթաճյուղում արձանագրվել է 14.3% անկում:

Շինարարության ճյուղում, կապիտալ ներհոսքի կրճատման և եկամուտների նվազման պարագայում, ավելացված արժեքը նվազել է 42.3%-ով: Հիմնականում կրճատվել է *բնակչության միջոցների* հաշվին իրականացվող շինարարությունը (70.7%-ով):

Ըստ շինարարության ճյուղային բաշխվածության՝ զգալիորեն նվազել են *առևտրի (58%) և բնակարանային շինարարության (65.9%)* ոլորտներում իրականացվող շինարարության ծավալները, մինչդեռ գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, տրանսպորտի և կապի, էներգետիկայի, ֆինանսական գործունեության, առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտներում արձանագրվել է աճ՝ համապատասխանաբար 69.5%-ով, 5.1%-ով, 22.4%-ով, 2.8 անգամ, 3.8 անգամ և 3.1 անգամ:

Ծառայությունների ոլորտում ավելացված արժեքը ավելացել է 0.7%-ով, ինչը հիմնականում արդյունք է մանրածախ առևտրի շրջանառության 0,5% աճի, մեծածախ առևտրի և ավտոմեքենաների առևտրի ծավալների՝ համապատասխանաբար 8.5% և 40.8% նվազումների: Այլ ծառայությունների ոլորտում արձանագրված նվազումը հիմնականում ֆինանսական, զբոսաշրջային գործակալությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի գործունեության և տրանսպորտային ծառայությունների կրճատման հետևանք է:

Գյուղատնտեսությունում արձանագրվել է ավելացված արժեքի 0.1 % անկում՝ պայմանավորված անասնապահության արտադրության ծավալների 0.9% կրճատմամբ: Անասնապահության ենթաճյուղում մասնավորապես նվազել է մսի և կաթի արտադրությունը՝ համապատասխանաբար 2.8%-ով և 4.4%-ով, իսկ ձվի արտադրությունն ավելացել է 15.3%-ով: Բուսաբուծության ենթաճյուղում արձանագրվել է 0.2% աճ:

Աշխատանքի շուկա³

Զնայած տնտեսական անկման բարձր տեմպերին, չորրորդ եռամսյակում անվանական աշխատավարձերի աճը կազմել է շուրջ 9.0%՝ պայմանավորված ինչպես բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններում աշխատավարձերի աճով, այնպես էլ աշխատանքի շուկայում առկա աշխատավարձի ճշգրտման կոշտու-

³ Աշխատանքի շուկայի չորրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿՔ գնահատումներն են՝ հիմնված երրորդ եռամսյակի և հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների փաստացի ցուցանիշների վրա: Ենթաբաժնում ներկայացված աճի գնահատականները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

թյուններով: Գործազրկության միջին եռամսյակային մակարդակը ավելացել է 0.8 տոկոսային կետով՝ կազմելով 7.1%: Եռամսյակի ընթացքում նկատվել է աշխատանքի արտադրողականության շուրջ 5% նվազում:

Նշված զարգացումների արդյունքում տնտեսությունում շարունակվել է արձանագրվել միավոր աշխատուժի ծախսերի աճ, որը սպառողական շուկայում առաջացրել է շուրջ 0.8% գնաճային ճնշումներ:

Համախառն պահանջարկ⁴

ԿԲ գնահատումների համաձայն, չորրորդ եռամսյակում մասնավոր ծախսումների անկման տեմպը դանդաղել է, և նվազումը իրական արտահայտությամբ կազմել է շուրջ 9.0%՝ 11.1 տոկոսային կետով բարելավվելով նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ: Մասնավոր ծախսումների կառուցվածքում մասնավոր ներդրումների նվազումը կազմել է ավելի քան 23%՝ արտացոլելով բնակչության և կազմակերպությունների միջոցների հաշվին իրականացվող շինարարության շուրջ 38%-ով նվազումը: Մասնավոր սպառման իրական նվազումը կազմել է 0.8%՝ պայմանավորված բնակչության եկամուտների, հատկապես՝ արտաքին տրանսֆերտների կրճատմամբ: Չորրորդ եռամսյակում մասնավոր սպառման և ներդրումների անկման տեմպերը ևս բարելավման միտումներ են ցուցաբերել՝ երրորդ եռամսյակի նույն ցուցանիշների համեմատ նվազելով համապատասխանաբար 1.1 և 22.5 տոկոսային կետերով:

Վերը նշված զարգացումների արդյունքում, չորրորդ եռամսյակի ընթացքում մասնավոր հատվածի ծախսումները շարունակել են զսպող ազդեցություն ունենալ գնաճի վրա: Այսպես, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, մասնավոր իրական ծախսումների գնահատված մակարդակը ցածր է գտնվել հնարավոր մակարդակից 3 - 4%-ով: Վերջինս գնանկումային ճնշումներ է առաջացրել սպառողական շուկայում, որի ազդեցությամբ պայմանավորված գնաճի նվազումը գնահատվում է 1 - 1.2 տոկոսային կետ:

2009 թ. չորրորդ եռամսյակում համաշխարհային և ներքին տնտեսության զարգացումների պարագայում ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է: Վերջինս հետևանք է արտահանման նկատմամբ ներմուծման ծավալների առաջանցիկ կրճատման: 2009 թ. չորրորդ եռամսյակում, ըստ գնահատումների, ապրանքների և ծառայությունների արտահանման⁵ տ/տ նվազումը կազմել է 7.6%: Ընդ որում՝ ապրանքների արտահանումը նվազել է տ/տ 10.5%-ով: Արտահանման դոլարային ծավալների նվազման տեմպերի դանդաղելու պատճառը մասամբ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում արտահանման ցածր մակարդակն է: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների տ/տ նվազումը չորրորդ եռամսյակում կազմել է 9.1%: Արդյունքում՝ 2009 թ. ապրանքների և ծառայությունների արտահանման դոլարային ծավալների նվազումը կազմել է 24.4%:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման⁶ նվազումը 2009թ. չորրորդ եռամսյակում, ըստ գնահատումների, կազմել է տ/տ 17.5% (այդ թվում՝ ապրանքների ներմուծման տ/տ նվազումը՝ 19.0%), իսկ ներմուծման իրական ծավալները նվազել են տ/տ 21.6%-ով: 2009 թ. ընթացքում ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային ծավալները նվազել են 23.2%-ով:

⁴ Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճի չորրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը 2009 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ են: Ենթաբաժնում ներկայացված իրական աճի գնահատականները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

⁵ Դուրավար-դեկտեմբեր ամիսներին ապրանքների արտահանման (\$OP) ծավալների նվազումը կազմել է 34.0%: Ծառայությունների եռամսյակային ցուցանիշները կանխատեսումներ են:

⁶ Դուրավար-դեկտեմբեր ամիսներին ապրանքների ներմուծման (ՄԻՖ) ծավալների նվազումը կազմել է 25.3%: Ծառայությունների եռամսյակային ցուցանիշները կանխատեսումներ են:

Ֆիզիկական անձանց՝ բանկային համակարգով փոխանցումների ակնկալվող նվազման տեմպերը չորրորդ եռամսյակում պահպանվել են: Այսպես՝ 2009 թ. ընդհանուր փոխանցումների (ներառում է առևտրային և ոչ առևտրային բնույթի փոխանցումները) զուտ ներհոսքի նվազումը կազմել է 28.2%, ընդ որում՝ ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքի նվազումը նույն ժամանակահատվածում կազմել է 33.3%: 2009 թ. չորրորդ եռամսյակում ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը նվազել է տ/տ 23.6%-ով: Վերջինս հիմնականում կրում է Ռուսաստանի⁷ տնտեսության զարգացումների ազդեցությունը:

Վերը նշված հոսքերի պայմաններում ընթացիկ հաշիվ/ՅՆԱ ցուցանիշը, ըստ գնահատումների, 2009 թ. կազմել է 14.0%՝ նախորդ տարվա 11.6%-ի փոխարեն:

Համախմբված բյուջե

Չորրորդ եռամսյակի⁸ զարգացումների արդյունքում, ՀՀ համախմբված բյուջեի եկամուտների նվազումը նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ կազմել է 11.0%, իսկ ծախսերի աճը, ներառյալ զուտ ներքին վարկավորումը՝ 35.0 %: Ընդ որում, պետական բյուջեի հարկային եկամուտների նվազումը կազմել է 10.1%: Արդյունքում՝ հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը համախառն պահանջարկի վրա եղել է ընդլայնողական և կազմել է 7.9 տոկոսային կետ⁹՝ հիմնականում պայմանավորված ծախսերի ընդլայնող ազդակով: Եկամուտների ազդակն ունեցել է փոքր ընդլայնող ազդեցություն: Հարկ է նշել, որ ծախսերի ընդլայնող ազդակը հետևանք է ՀՆԱ անկման և նախորդ տարվա նկատմամբ ծախսերի աճի, որի պատճառը ինչպես ընթացիկ, կապիտալ, այնպես էլ տնտեսությանը ուղղված զուտ վարկավորման ծավալների աճն է:

Կառավարության կողմից 2009 թ. իրականացված հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված էր ներքին պահանջարկի խթանմանը և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ոչ ցանկալի ազդեցությունների մեղմմանը: Այսպես, հարկաբյուջետային քաղաքականությունը ամբողջական պահանջարկի վրա ունեցել է 8.0 տոկոսային կետ ընդլայնող ազդեցություն, որը պայմանավորված էր եկամուտների գրեթե չեզոք և ծախսերի ընդլայնող ազդակի ձևավորմամբ: Ընդ որում, հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնող ազդեցությունը ավելի վառ է արտահայտվել տարվա երկրորդ կեսին, քանի որ կառավարության կողմից հակաճգնաժամային տարբեր միջոցառումների իրականացման արդյունքում աճել էին պետական ծախսերը:

Ամփոփելով նշենք, որ, ընդլայնող ազդեցության հետևանքով, հարկաբյուջետային հատվածի կողմից գնաճային ճնշումները գերակշռել են նասնավոր ծախսումների նվազմամբ պայմանավորված գնանկումային ճնշումներին, որի արդյունքում ներքին պահանջարկի զարգացումներով պայմանավորված գնաճի ավելացումը գնահատվել է 0.8 - 1 տոկոսային կետ: Այսպիսով, հաշվի առնելով նաև աշխատանքի շուկայի կողմից գնահատված 0.8 տոկոսային կետ գնաճային ճնշումները, չորրորդ եռամսյակի ընթացքում ներքին պահանջարկի և աշխատանքի շուկայի զուտ ազդեցությունը գնաճի վրա, ըստ գնահատումների, կազմել է 1.6 - 1.8 տոկոսային կետ:

⁷ Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների հիմնական մասը ստացվում է Ռուսաստանից:

⁸ ՀՀ համախմբված բյուջեի չորրորդ եռամսյակի ցուցանիշների հիմքում ՀՀ պետական բյուջեի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների նախնական փաստացի ցուցանիշներն են:

⁹ Հարկաբյուջետային հատվածի ազդեցությունը համախառն պահանջարկի վրա գնահատվում է հարկաբյուջետային ազդակների միջոցով: Ըստ հարկաբյուջետային ազդակների գործող մեթոդաբանության՝ եկամուտների ազդակի հաշվարկում օգտագործվող ՀՆԱ-ն փաստացի անվանական ՀՆԱ-ն է, իսկ ծախսերի ազդակում՝ գնահատված պրոտենցիալ ՀՆԱ-ն:

Փող և վարկ

2009 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ևս ԿԲ-ն շարունակել է իրականացնել տնտեսական ակտիվության խթանման և գների կայունության խնդիրների համադրմանն ուղղված դրամավարկային քաղաքականություն: Այս պարագայում, հաշվի առնելով արտաքին միջավայրում ձևավորված չափավոր գնաճային ճնշումները և այն հանգամանքը, որ ընթացիկ ժամանակահատվածում գնաճի վարքագիծն ու մակրոտնտեսական զարգացումները հիմնականում համապատասխանում են ԿԲ կանխատեսումներին, ՀՀ ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողել է անփոփոխ (5.0%):

2009 թ. չորրորդ եռամսյակում ֆինանսական շուկաներում արձանագրվել են հետևյալ միտումները. ռեպո և ՊՊ երկրորդային շուկաներում արձանագրվել է տոկոսադրույքների աճ և դեկտեմբերին միջին տոկոսադրույքները կազմել են համապատասխանաբար 5.79% և 12.06%: Նույն միտումն է արձանագրվել նաև ՊՊ առաջնային շուկայում. մինչև 1 տարի մարման ժամկետայնությամբ ՊԿՊ-երի միջին եկամտաբերությունը կազմել է 8.22%, իսկ 3-5 տարի մարման ժամկետայնությամբ ՊՊ-երի միջին եկամտաբերությունը՝ 13.07%:

Արժութային շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի անվանական փոխարժեքի արժեզրկման միտումը նոյեմբերի վերջին տասնօրյակից փոխվել է արժևորման և տարեվերջին կայունացել 1 ԱՄՆ դոլարը՝ 375 - 378 դրամ մակարդակում:

Տնտեսական և ֆինանսական կայունության պահպանման պարագայում 2009 թվականի չորրորդ եռամսյակում ևս շարունակվել են դրամավարկային ցուցանիշների՝ վերջին երկու եռամսյակներում դիտված համեմատաբար բարձր աճի միտումները: Այսպես, դրամային զանգվածն աճել է 7.0%-ով՝ պայմանավորված հիմնականում շրջանառության մեջ գտնվող կանխիկի 11.1% աճով, իսկ դրամային ավանդները՝ եռամսյակում ավելացել են ընդամենը 0.8%-ով: Արտարժութային ավանդների աճը չորրորդ եռամսյակում կազմել է 13.0%, ինչի արդյունքում փողի զանգվածն ավելացել է 9.6%-ով: Նշված ցուցանիշների տարեկան փաստացի միտումները հիմնականում համընկել են կանխատեսումներին. փողի զանգվածն ավելացել է 15.1%-ով, փողի բազան՝ 13.8%-ով, իսկ դրամային զանգվածն ու դրամային ավանդները համապատասխանաբար նվազել են 16.2% և 24.10%-ով:

Ընթացիկ ժամանակահատվածում շարունակել է արագ տեմպերով աճել տնտեսության դոլարայնացման մակարդակը՝ արտահայտվելով արտարժութային ավանդների և վարկերի աճի բարձր տեմպերի պահպանմամբ: Մասնավորապես՝ տարեկան կտրվածքով արտարժութային ավանդները դոլարային արտահայտությամբ ավելացել են 74.0%-ով (դրամային արտահայտությամբ՝ 114.4%-ով), իսկ արտարժութային վարկերը՝ 24.6%-ով (դրամային արտահայտությամբ՝ 52.5%-ով): Չնայած չորրորդ եռամսյակում դիտվել է արտարժութային վարկերի համեմատ դրամային վարկերի առաջանցիկ աճ, վերջինիս տեմպերը դեռևս շարունակել են մնալ ոչ բավարար: Ընդհանուր առմամբ, վարկավորման ծավալները չորրորդ եռամսյակի ընթացքում շարունակել են աճել ավելի բարձր տեմպերով՝ հիմնականում պայմանավորվելով ՀՀ ԿԲ և Կառավարության համատեղ հակաճգնաժամային միջոցառումների իրականացման շրջանակներում բանկային համակարգի միջոցով տնտեսության վարկավորման ծրագրերի իրականացմամբ:

Արտաքին միջավայր¹⁰

2010 թ. ընթացքում, ԱՄՅ և Համաշխարհային բանկի նոր կանխատեսումների համաձայն, համաշխարհային տնտեսության վերականգնման տեմպերը համապատասխանաբար կկազմեն 3.9% և 2.7%: ԱՄՅ նոր կանխատեսումները նույնիսկ գերազանցել են նախկինում կանխատեսվող 3.1% տնտեսական աճի ցուցանիշը: Վերջինիս հիմնական շարժիչ ուժը զարգացող երկրները կլինեն: Այնուամենայնիվ, իրավիճակը դեռևս փխրուն է, և համաշխարհային տնտեսության վերականգնումը պայմանավորվելու է տարբեր տարածաշրջաններում վերականգնման տարբեր տեմպերով:

Ապրանքային շուկաներում 2010 թ. ընթացքում հիմնականում կպահպանվեն նախորդ տարվա վերջին ձևավորված մակարդակները: Այսպես, 2010 թ. ակնկալվում է նավթի միջազգային գների աճ՝ մեկ բարելի դիմաց միջինում 80 ԱՄՆ դոլարի շրջակայքում: Միաժամանակ, ակնկալվում է թանկարժեք և արդյունաբերական մետաղների գների ներկա մակարդակի պահպանում. մասնավորապես՝ պղնձի գները կտատանվեն մեկ տոննայի դիմաց 7000 ԱՄՆ դոլար շրջակայքում, իսկ ոսկունը՝ 1 տրոյական ունցիայի դիմաց 1000 ԱՄՆ դոլարից փոքր-ինչ ավելի:

Ինչ վերաբերում է պարենային ապրանքներին, ապա հացահատիկի շուկայում գների ներկա մակարդակը կպահպանվի՝ պայմանավորված 2009 - 2010 մարքեթինգային տարվա բերքի սպասվող մակարդակների ավելացմամբ: Համաշխարհային պաշարների սակավության պայմաններում գնի բարձր մակարդակը 2010 թ. կպահպանվի նաև շաքարավազի շուկայում:

Ֆինանսական շուկաներում ԱՄՆ դոլարի փոխարժեքը եվրոյի նկատմամբ կարող է տարբեր դրսևորումներ ունենալ: Մի կողմից ԱՄՆ դոլարի դիրքերը կարող են թուլանալ՝ պայմանավորված նախորդ տարում իրականացված ընդլայնողական քաղաքականությունների ազդեցությունների արտահայտմամբ ընթացիկ տարում: Մյուս կողմից՝ ԱՄՆ դոլարի դիրքերը որոշակի կամրապնդվեն, ինչը կպայմանավորվի, եվրոմիության տնտեսության համեմատ, ԱՄՆ տնտեսության արագ վերականգնումով:

Ինչ վերաբերում է երկրների «ելքի ռազմավարության» իրականացման ժամանակահատվածին, ապա 2010 թ. սկզբներից շատ երկրներ արդեն իսկ նախանշում են հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների խստացում: Իսկ հիմնական զարգացած երկրներում սպասվում է այդ քաղաքականությունների խստացում 2010 թ. երկրորդ կիսամյակից սկսած:

Այսպիսով, կանխատեսվող ժամանակահատվածում համաշխարհային տնտեսության բարենպաստ միջավայրի պահպանման պարագայում և 2009թ. ընթացքում իրականացված խիստ ընդլայնողական քաղաքականությունների արդյունքում համաշխարհային գնաճի ավելացման ռիսկերը գերակշռում են, ինչը, բնականաբար, կավելացնի գնաճային ճնշումները ներքին շուկայում:

Համախառն առաջարկ

2010 թվականի երկրորդ եռամսյակից սկսած ակնկալվում է տնտեսության ճյուղերի ավելացված արժեքների իրական աճերի վերականգնում՝ պայմանավորված 2009 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված իրական ՀՆԱ-ի ցածր մակարդակով, համաշխարհային տնտեսական իրավիճակի նկատելի բարելավումներով և տնտեսության տարբեր ճյուղերում իրականացված և նախատեսվող ներդրումներով:

¹⁰ Արտաքին միջավայրի կանխատեսումների համար հիմք է ծառայել IMF, World Bank, The Economist, Global Insight, Financial Times, US Department of Agriculture, РосБизнесКонсалтинг և այլ աղբյուրների տեղեկատվությունը:

Արդյունքում՝ 2010 թվականին ակնկալվում է տնտեսության վերականգնում. ըստ ԿԲ գնահատումների՝ տնտեսական աճը առնվազն կկազմի շուրջ 0.5 - 2%:

Տնտեսական աճի ռիսկերը երկկողմանի են, ընդ որում՝ գերակշռում են աճի ուղղությամբ ռիսկերը՝ պայմանավորված ինչպես համաշխարհային պահանջարկի վերականգնման արագացման ազդեցությամբ ներքին պահանջարկի՝ ակնկալվածից ավելի աճով, այնպես էլ ճանապարհաշինության ենթակառուցվածքներում և էներգետիկայի բնագավառում խոշորածավալ ծրագրերի իրագործմամբ:

Արդյունաբերության ճյուղում 2010 թվականին կանխատեսվում է աճի տեմպի վերականգնում՝ 0-2%-ի միջակայքում, որը կդրսևորվի երրորդ եռամսյակից սկսած: Դա հիմնականում պայմանավորված կլինի հանքագործական (*միջազգային շուկաներում գումար մետաղների գների բարձր մակարդակի պահպանմամբ*) և սննդի արդյունաբերությունում (*համաշխարհային պահանջարկի վերականգնման արդյունքում սննդի վերամշակման ենթաճյուղում ակնկալվող թողարկման ծավալների և շաքարի, ոգելից խմիչքների արտադրության ծավալների աճով*) աճի տեմպերի աստիճանական վերականգնմամբ, էլեկտրաէներգիայի (*Երևանի ՋԷԿ-ի և Յրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շահագործմամբ*) և շինանյութերի արտադրության ծավալների անկման տեմպերի կրճատմամբ:

Արդյունաբերության ճյուղից բխող ռիսկերը կանխատեսված ցուցանիշների գերազանցման ուղղությամբ են և պայմանավորված կլինեն արդյունաբերության մի շարք ենթաճյուղերում նախատեսվող, բայց դեռևս չհաստատված ծրագրերի իրականացմամբ:

Կապիտալ շինարարության ոլորտում 2010 թվականին սպասվում է անկման տեմպերի նվազում, ինչի արդյունքում շինարարության ավելացված արժեքի իրական անկումը կլինի 2-5% միջակայքում՝ հիմնականում պայմանավորված էներգետիկայի (*փոքր ՇԷԿ-եր, հողմաէլեկտրակայաններ, բարձրավոլտ էլեկտրահաղորդալարային գծերի կառուցում դեպի Վրաստան և Իրան, Յրազդանի ՋԷԿ, Սեդրու ՇԷԿ, Սեծամորի ատոմակայանի նոր էներգաբլոկ*), հյուրանոցաշինության («Տաթևի վանք. վերածնունդ և զարգացում» ծրագրի շրջանակներում հյուրանոցային համալիրի կառուցում), տրանսպորտի («Յուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ծրագիր, Իրան - Հայաստան երկաթգծի կառուցում, ճանապարհաշինություն, երկաթգծի հավատարմագրային կառավարման ընթացքում իրականացվելիք ներդրումներ) ոլորտներում իրականացվելիք շինարարական աշխատանքներով, ինչպես նաև 2009 թվականի նույն ժամանակահատվածում ճյուղում գրանցված աննախադեպ բարձր անկմամբ:

Ծառայությունների ճյուղում կանխատեսվում է ավելացված արժեքի 1 - 3% իրական աճ՝ հիմնականում պայմանավորված տրանսպորտի և կապի («Հարավկովկասյան» երկաթուղու ներդրումների արդյունքում բեռնափոխադրումների և ուղևորաշրջանառության հնարավոր աշխուժացում, հեռահաղորդակցության ոլորտում առաջատար տեխնոլոգիաների ներդրում, ինտերնետի մեծածախ գների զգալի նվազում), ֆինանսական ծառայությունների (*ֆինանսական միջնորդության աճ*), անշարժ գույքի հետ կապված գործառնությունների (*ԱԳ շուկայում որոշակի աշխուժացում, որին նաև կնպաստի «Ազգային հիփոթեքային ընկերության» կողմից հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը*) ոլորտներում ակնկալվող աճի:


Շինարարության և ծառայությունների ճյուղերում առկա են աճի ավելի բարձր տեմպերի արձանագրման ռիսկեր՝ կապված ինչպես բնակչության եկամուտների աճի, այնպես էլ՝ նախատեսվող ներդրումային ծրագրերի իրագործման հետ:

Գյուղատնտեսության ճյուղում տարեվերջին ակնկալվում է ավելացված արժեքի 2 - 4% իրական աճ: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսության կեսը կազմող բուսաբուծության բերքը կախված է առավելապես բնակլի-

մայական պայմաններից, գյուղատնտեսության աճի կանխատեսման ժամանակ ընտրվել է ամենաքիչ ռիսկային տարբերակը:

Այնուհանդերձ, ուղրտում առկա ռիսկերը կանխատեսված ցուցանիշի գերազանցման ուղղությամբ են՝ կապված անասնապահությունում անասնազվխաքանակի ավելացման, բերքատվության բարձրացման, ինչպես նաև ցանքատարածությունների որոշակի աճի հետ (նոր ցեղային անասունների և բարձր բերքատվությամբ սերմերի ներկրում, հակակարկտակայանների տեղադրում, գյուղմթերքների կուտակման, պահեստավորման, առաքման լոգիստիկ կենտրոնների գործարկում):

**ՀՆԱ իրական աճի կանխատեսման հավանականությունների բաշխում
(եռամսյակը՝ նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ)**



Տնտեսական աճի կանխատեսման հավանականությունների բաշխում

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում գտնվելու հավանականություն			
	2010թ. I եռ.	2010թ. II եռ.	2010թ. III եռ.	2010թ. IV եռ.
< -2%	0.18%	0.16%	0.54%	5.68%
-2 - 0%	25.02%	5.00%	4.67%	12.35%
0 - 2%	31.17%	17.98%	14.60%	15.70%
2 - 4%	22.37%	18.84%	18.58%	15.12%
4 - 6%	12.73%	16.77%	17.19%	13.49%
6 - 8%	5.74%	13.73%	14.50%	11.20%
8 - 10%	2.05%	10.35%	11.17%	8.65%
10 - 12%	0.58%	7.18%	7.85%	6.23%
12% <	0.35%	5.10%	5.59%	4.45%

Աշխատանքի շուկա¹¹

Աշխատանքի շուկայի ցուցանիշների՝ 2010 թվականի գնահատումները վերանայվել են աճի ուղղությամբ: Վերանայման հիմնական պատճառը համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսությունում համախառն պահանջարկի, այդ թվում՝ աշխատուժի նկատմամբ պահանջարկի աճի սպասումներն են, ինչպես նաև 2009 թվականի համեմատ միգրանտների արտահոսքի աճով պայմանավորված՝ աշխատուժի առաջարկի նվազումը:

¹¹ Աշխատանքի շուկայի չորրորդ եռամսյակի տվյալները ՀՀ ԿԲ գնահատումներն են հիմնված երրորդ եռամսյակի և հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների փաստացի ցուցանիշների վրա: Ենթաբաժնում ներկայացված աճի գնահատականները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

Ըստ վերանայված գնահատումների՝ տնտեսության միջին անվանական աշխատավարձը 2010 թվականին կավելանա շուրջ 10%-ով՝ պայմանավորված նախորդ տարվա նկատմամբ արտադրողականության որոշակի վերականգնմամբ, տնտեսությունում աշխատուժի առաջարկի կրճատմամբ և բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններում աշխատավարձերի ակնկալվող որոշակի աճով՝ չնայած նախորդ տարվա համեմատ վերջինիս աճի տեմպերի էական նվազմանը:

Ըստ գնահատումների՝ 2010 թվականին մասնավոր հատվածում կարձանագրվի միավոր աշխատուժի ծախսերի ավելի քան 8% աճ, որի հետևանքով աշխատանքի շուկայում ձևավորված գնաճը կկազմի 1.4 - 1.6%:

Համախառն պահանջարկ¹²

Մասնավոր հատվածի ծախսումներ

2010 թվականի ընթացքում սպասվում է համախառն պահանջարկի աստիճանական աճ՝ պայմանավորված ներքին տնտեսության աշխուժացմամբ և համաշխարհային տնտեսության վերականգնման միտումներով: Նախորդ տարվա համեմատ, պետական ծախսերը, իրական արտահայտությամբ, կնվազեն,¹³ իսկ մասնավոր ծախսերը կավելանան՝ պայմանավորված տնօրինվող եկամուտների աճով և ներդրումային միջավայրում անորոշությունների զգալի նվազմամբ:

Մասնավոր հատվածի ծախսումների՝ 2010 թվականի իրական աճի գնահատումները ճշգրտվել են աճի ուղղությամբ՝ ինչպես մասնավոր սպառման, այնպես էլ մասնավոր ներդրումների մասով: Աճի տեմպերի գնահատումների վերանայման համար հիմք են հանդիսացել համաշխարհային տնտեսական իրավիճակի կայունացման հետևանքով մի շարք ցուցանիշների, այդ թվում՝ բնակչության եկամուտների՝ աշխատավարձերի և ընթացիկ տրանսֆերտների, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտների, արտաքին ֆինանսական այլ հոսքերի աճի սպասումները, համաշխարհային պահանջարկի վերականգնման միտումների պարագայում ներդրումային միջավայրում անորոշությունների և բացասական սպասումների նվազումը, որոնք առկա էին 2009 թվականի ընթացքում:

Ըստ գնահատումների՝ 2010 թվականին ակնկալվում է մասնավոր սպառման իրական 1.7% աճ, իսկ մասնավոր ներդրումներն իրական արտահայտությամբ կավելանան շուրջ 5%-ով:

2009 թվականի ընթացքում ձևավորված մասնավոր ծախսումների՝ հնարավոր մակարդակից 5% ճեղքվածքը 2010 թվականին կփոքրանա՝ հասնելով 1 - 2%՝ պայմանավորված ինչպես սպառման, այնպես էլ ներդրումների կանխատեսվող աճով: Այսպիսով, տարվա ընթացքում մասնավոր ծախսումները գնանկումային ճնշումներ կառաջացնեն սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը 0.3 - 0.6 տոկոսային կետով:

Ընթացիկ հաշիվ

Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության առավել բարենպաստ միջավայրը, ինչպես նաև ներքին տնտեսության հետագա զարգացումները՝ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի տարրերի կանխատեսումներում էական փոփոխություններ չեն կատարվել և հիմնականում ճգրտվել է ներմուծման ցուցանիշը:

Այսպես, մետաղների գների ձևավորված բարձր մակարդակի պահպանման պարագայում 2010 թ. ապրանքների և ծառայությունների արտահանման դոլարային ծավալների ակնկալվող աճը կկազմի 10 - 15%: Ապրանքների և ծառայությունների ար-

¹² Մասնավոր հատվածի սպառման և ներդրումների փաստացի ցուցանիշները 2009 թվականի երրորդ եռամսյակի դրությամբ են: Ենթաբաժնում ներկայացված իրական աճի գնահատականները նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:

¹³ Մինչդեռ 77 պետական բյուջեի ծախսերի անվանական աճը կազմում է շուրջ 3 տոկոս:

տահանման իրական ծավալների աճը 2010 թ. ընթացքում կձևավորվի 2 - 4% միջակայքում:

Ապրանքների և ծառայությունների ներմուծման կանխատեսումները ճշգրտվել են աճի ուղղությամբ: Պատճառն այն է, որ բյուջեի մեծ պակասուրդի պահպանումը և մասնավոր ծախսումների ակնկալվող աճը որոշակիորեն խթանում են ներմուծումը՝ դանդաղեցնելով վերջիններիս արագ ճշգրտումը: 2010 թ. ընթացքում ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային ծավալների աճը կարձանագրվի 8 - 10% միջակայքում, իսկ իրական ծավալների աճը կկազմի 2 - 4%:

2010 թ. ակնկալվում է ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների աճ 5 - 10%-ի միջակայքում՝ հիմնականում պայմանավորված Ռուսաստանի տնտեսության նոր լավատեսական կանխատեսումներով (ԱՄՅ նոր կանխատեսումների համաձայն՝ Ռուսաստանի տնտեսական աճի ցուցանիշը 2010 թ. կկազմի 3.6%, ինչը բարձր է նախկին կանխատեսումներից):

Նշված զարգացումների արդյունքում 2010 թ. ընթացիկ հաշիվ/ՅՆԱ ցուցանիշը նախկին կանխատեսումների համեմատ կվատանա և կգտնվի 14-16%-ի միջակայքում, ինչը հիմնականում կպայմանավորվի ներմուծման մեծ ծավալների պահպանմամբ:

Միաժամանակ նշենք, որ արտաքին հատվածի դրական տնտեսական զարգացումների պարագայում, և պայմանավորված Կառավարության կողմից նախորդ տարվա երկրորդ կեսին իրականացված խոշորածավալ ներդրումային ծրագրերի հիմնական ազդեցությամբ, արդեն իսկ 2010 թ. հնարավոր է արտահանման ծավալների և մասնավոր տրանսֆերտների ավելի մեծ աճ: Արդյունքում՝ ընթացիկ հաշիվ մասով ձիսկերը հիմնականում բարելավման ուղղությամբ են:

Համախմբված բյուջե¹⁴

2010 թվականին ՀՀ կառավարությունը շարունակելու է ներքին պահանջարկի խթանման միջոցով տնտեսության վերականգնմանն ուղղված ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը: Պետական ծախսային ծրագրերի ապահովման հիմնական ուղեցույցը ՀՆԱ-ում հարկային եկամուտների 17.5%¹⁵ ցուցանիշի (1.0 տոկոսային կետ աճ 2009 թվականի նկատմամբ) ապահովումն է և պետական ծախսերի իրականացումը ծրագրված համամասնություններին համապատասխան: Այսպես, պետական ծախսերի նախատեսված աճը հիմնականում վերաբերում է ընթացիկ ծախսերին, իսկ կապիտալ ծախսերի գծով կդիտվի նվազում: Չնայած նախորդ տարվա նկատմամբ պակասուրդ/ՅՆԱ հարաբերակցությունը կունենա նվազման միտում, այնուամենայնիվ, տարվա արդյունքում նշված ցուցանիշը դեռևս կպահպանվի բարձր մակարդակում՝ կազմելով ՀՆԱ 6.0% -ը:

Այսպիսով՝ համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա շուրջ 5.5 տոկոսային կետ¹⁶ ընդլայնող ազդեցություն, որը հիմնականում ծախսերի՝ ընդլայնող և եկամուտների՝ փոքր զսպող ազդեցության հետևանք է: Ընդ որում, տարվա առաջին կեսին ակնկալվում է ավելի մեծ ընդլայնող ազդակի ձևավորում՝ պայմանավորված նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ծախսերի աճով:

¹⁴ Հարկաբյուջետային հատվածի ազդեցության գնահատումը կատարվել է «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համամասնությունների հիման վրա կազմված համախմբված բյուջեի ցուցանիշների հիման վրա:

¹⁵ 2010 թվականի հարկեր/ՀՆԱ ցուցանիշի հաշվարկի հիմքում ՀՀ ԿԲ կողմից գնահատված ՀՆԱ ցուցանիշն է:

¹⁶ 2010 թվականին հարկաբյուջետային ազդակի ազդեցությունը գնահատվել է 2008 թվականի համախմբված բյուջեի ցուցանիշների նկատմամբ (դիտարկելով 2008 թվականը որպես բազիսային տարի), քանի որ 2009 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը կրել է զգալի առանձնակի ազդեցություն՝ պայմանավորված հակաճգնաժամային միջոցառումների իրականացման արդյունքում կատարված պետական ծախսերի և տնտեսությանն ուղղված զուտ ներքին վարկավորման ծավալների աճով: Եկամուտների ազդեցությունը հաշվարկվել է գնահատված ՀՆԱ անվանական ցուցանիշի, իսկ ծախսերի ազդակը՝ գնահատված հնարավոր ՀՆԱ ցուցանիշի նկատմամբ:

Ամփոփելով նշենք, որ, ընդլայնող ազդեցության հետևանքով հարկաբյուջետային հատվածի կողմից գնաճային ճնշումները կգերակշռեն մասնավոր ծախսումների նվազմամբ պայմանավորված գնանկումային ճնշումներին, որի արդյունքում ներքին պահանջարկի զարգացումներով պայմանավորված գնաճը կավելանա 1.1 - 1.4 տոկոսային կետով: Հաշվի առնելով նաև աշխատանքի շուկայի կողմից սպասվելիք 1.4 - 1.6 տոկոսային կետ գնաճային ճնշումները՝ կարելի է ակնկալել, որ 2010 թվականի ընթացքում ներքին պահանջարկից բխող և աշխատանքի շուկայից փոխանցվող գնաճը կկազմի 2.5 - 3.0%:

Փող և վարկ

Չետագա 12-ամսյա ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշների կանխատեսումների հիմքում նախորդ տարվա արդյունքներով ձևավորված փաստացի մակրոտնտեսական միջավայրն է, կանխատեսված մակրոտնտեսական զարգացումները և այդ ժամանակահատվածի համար նախատեսված հարկաբյուջետային ընդլայնողական քաղաքականության սցենարը: Նշված գործոնների ազդեցությամբ տարվա ընթացքում ակնկալվող բարձր գնաճային ճնշումների վերացման և գնաճը նպատակային միջակայքում պահելու նկատառումով՝ նախատեսվում է 2010 թ. իրականացնել զսպողական դրամավարկային քաղաքականություն: Այդուհանդերձ, ինչպես շատ զարգացող և հիմնական զարգացած երկրներն են այս տարվա ընթացքում նախատեսում դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների միաժամանակյա խստացում, մեր պարագայում ևս միայն դրամավարկային կոշտ քաղաքականության իրականացումը բավարար չէ մակրոտնտեսական առաջադրված նպատակների ապահովման համար. անհրաժեշտ է զուգընթաց իրականացնել նաև համակարգված հարկաբյուջետային քաղաքականություն:

2010 թ. զսպողական դրամավարկային քաղաքականությունը կարտահայտվի դրամավարկային ցուցանիշների առավել զուսպ աճի տեմպերի կանխատեսումներով: Այսպես. ըստ ԿԲ գնահատումների, 2010 թ. կավարտվի փողի զանգվածի տարեկան 9 - 11% աճով՝ նախորդ տարվա 15.1%-ի փոխարեն, և փողի բազայի 3 - 5% աճով՝ նախորդ տարվա 13.8%-ի փոխարեն: Ընդ որում, առաջին եռամսյակի սեզոնային նվազումից հետո, նշված ցուցանիշների ակնկալվող տարեկան աճը կապահովվի հաջորդ երեք եռամսյակների ընթացքում, միջին եռամսյակայինը համապատասխանաբար կազմելով 3.4% և 2.3%:

12-ամսյա կտրվածքով կանխատեսվում է նաև փողի զանգվածի դրամային տարրերի եռամսյակային համաչափ աճ. շրջանառությունում գտնվող կանխիկի միջին եռամսյակային աճը կկազմի շուրջ 2%, իսկ դրամային ավանդներինը՝ 3.1%: Ֆինանսական և տնտեսական կայունացման պայմաններում, ինչպես նաև հաշվի առնելով տնտեսության ապադոլարայնացմանն ուղղված ձեռնարկվելիք լայնածավալ միջոցառումները, ակնկալվում է դոլարայնացման աճի տեմպերի դանդաղում, ինչի արդյունքում հետագա մեկ տարվա կտրվածքով արտարժույթային ավանդների տարեկան աճը կկազմի 12.4%, իսկ միջին եռամսյակային աճը՝ շուրջ 3.0%:


Ֆինանսական համակարգի կողմից 2010 թ. տնտեսության վարկավորումը ևս տեղի կունենա հիմնականում փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման ծրագրերի իրագործման և, մասամբ էլ՝ հիփոթեքային շուկայի աշխուժացմանն ուղղված միջոցների տրամադրման հաշվին: Արդյունքում, 2010 թ. տնտեսության վարկավորման ցուցանիշը կավելանա 7 - 9%-ով, իսկ միջին եռամսյակային աճը կկազմի մոտ 2%:

Նշենք, որ դրամավարկային հատվածում հնարավոր ռիսկերն ավելի բարձր աճի տեմպերի դրսևորման ուղղությամբ են՝ պայմանավորված այս տարի նախատեսվող ապադոլարայնացման լայնածավալ միջոցառումների ձեռնարկման արդյունքում դրամի նկատմամբ պահանջարկի աճով: Վերջինս կհանգեցնի փողի ազրեգատների դրամային տարրերի վերոնշյալ կանխատեսումների գերազանցման, ինչը կուղեկցվի նաև արտարժույթային ավանդների նախատեսված աճի տեմպի որոշակի դանդաղմամբ:

ԳՆԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ 12-ԱՄՍՅԱ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՏՎԱԾՈՒՄ

Միջազգային շուկաներում հանքահումքային և պարենային ապրանքների գների շարունակական աճի, ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության իրականացման և տնտեսական ակտիվության վերականգնման ներկա միտումների պահպանման պայմաններում սպասվում է, որ 2010 թ. ընթացքում կպահպանվի նախորդ տարեվերջից ձևավորված բարձր գնաճային ֆոնը՝ ռիսկեր առաջացնելով գնաճի նպատակային թիրախի ապահովման համար: Սպասվում է, որ տարվա առաջին կիսամյակի ընթացքում ընդհանուր գնաճի տեմպը կշարունակի արագանալ՝ պայմանավորվելով ինչպես ներմուծվող ապրանքների դրամային գների շարունակական բարձրացմամբ և ներքին գնաճի բարձր մակարդակով, այնպես էլ 2010 թ. երկրորդ եռամսյակից սկսած՝ գազի և ջրի սակագների ուղղակի և ինքնարժեքի միջոցով այլ ապրանքների գների աճով (ընդհանուր նպաստումը կուտակային գնաճին՝ 1.0 տոկոսային կետ): Նման զարգացումների պարագայում, գնաճը նպատակային թիրախին մոտեցնելու նպատակով, ԿԲ-ն պետք է բարձրացնի վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ գնաճի զարգացումներին համահունչ, որի պայմաններում միայն հնարավոր կլինի տարվա վերջին գնաճի ցուցանիշը պահպանել նպատակային միջակայքում: Կոշտ դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքները կարտահայտվեն հիմնականում տարվա երկրորդ կիսամյակից սկսած, երբ գնաճի տեմպը կսկսի աստիճանաբար նվազել: Սակայն վերոնշյալ մակրոտնտեսական զարգացումների շարունակական դրսևորման ազդեցությամբ՝ գնաճը տարվա ընթացքում մշտապես կգտնվի նպատակային միջակայքի վերին հատվածից ավելի բարձր մակարդակում: Ըստ ԿԲ կանխատեսումների՝ տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի վարկածի պարագայում, 2010 թվականի երկրորդ եռամսյակի վերջին գնաճի կանխատեսման կենտրոնական արժեքը կկազմի 7.9%, իսկ տարեվերջին՝ 7.4%: Կանխատեսվող ժամանակահատվածում գնաճի՝ կանխատեսված արժեքից շեղման ռիսկերը հիմնականում աճի ուղղությամբ են՝ կապված համաշխարհային տնտեսության ավելի արագ վերականգնման պայմաններում ներքին պահանջարկի՝ կանխատեսվածից ավելի բարձր աճի, ինչպես նաև հանքահումքային և պարենային ապրանքների միջազգային գների՝ կանխատեսվածից ավելի բարձր մակարդակի ձևավորման հետ: Միաժամանակ, գյուղատնտեսության ճյուղի արտադրության ծավալներից կախված, գյուղատնտեսական ապրանքների գների վրա ազդեցության միջոցով առկա են գնաճի կանխատեսված ցուցանիշից ինչպես նվազման, այնպես էլ աճի ուղղությամբ ռիսկեր:

Գնաճի կանխատեսման հավանականությունների բաշխման գրաֆիկ (12-ամսյա)



2010 թվականի գնաճի կանխատեսման հավանականային բաշխում

Գնաճի միջակայքը	Գնաճի տվյալ միջակայքում ընկնելու հավանականություն	
	2010թ. II եռ.	2010թ. IV եռ.
< 5.0%	0.00%	0.6%
5.0-6.0%	0.01%	5.8%
6.0-7.0%	2.7%	22.2%
7.0-8.0%	46.0%	33.2%
8.0-8.5%	29.5%	14.0%
8.5-9.0%	15.7%	10.4%
9.0-10.0%	5.9%	10.6%
10.0% <	0.1%	3.2%

Ամփոփելով նշենք, որ բարձր գնաճի վերոնշյալ կանխատեսումները նվազեցնելու և առկա գնաճային ռիսկերը մեղմելու նկատառումներից ելնելով, հիմնավոր է 2010 թ. համար կոշտ դրամավարկային քաղաքականության իրականացումը, որը նպատակաուղղված կլինի գների կայունության խնդրի ապահովմանը: